ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Արամե» ՍՊԸ-ի միջև 2025թ. օգոստոսի 5-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/2 ծածկագրով «ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Արարատի մարզի Վարդաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրու թիվ 20 միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Տավուշի մարզի Կայան բնակավայրի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «14» 10 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Արամե» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա. Սարգսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի **2025թ. օգոստոսի 5-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/2 ծածկագրով «ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Արարատի մարզի Վարդաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրու թիվ 20 միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Տավուշի մարզի Կայան բնակավայրի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման** պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 1-ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Արամե» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնց 6/169
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 08270782
Հաշվարկային 1 Հ/Հ՝ 900011054716	Հ/Հ՝ 163308045760
Հաշվարկային 2 Հ/Հ՝ 900011054724	
Հաշվարկային 3 Հ/Հ՝ 900011054732	
Հաշվարկային 4 Հ/Հ՝ 900011056497	Բանկ՝ Հայէկոնոմբանկ
Հաշվարկային 5 Հ/Հ՝ 900011056513	
Հաշվարկային 6 Հ/Հ՝ 900011056521	
Հաշվարկային 7 Հ/Հ՝ 900011056539	
Կենտրոնական գանձապետարան	Տնօրեն՝ Ա.Սարգսյան
Գործադիր տնօրեն	
Ս. Բաղինյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
2025թ. օգոստոսի 5-ին կնքված
N «ՀՏՋՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/2» ծածկագրով
ծառայությունների գնման պայմանագրի
« 14 »_____10_____ 2025թ.
կնքված Համաձայնագիր 1-ի

Հավելված N 1
2025թ. օգոստոսի 5-ին կնքված
N «ՀՏՋՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/2» ծածկագրով
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
1.	98111140/14	«ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	492 690	1	ՀՀ Արարատի մարզ, Հնաբերդ	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
2.	98111140/15	«ՀՀ Արարատի մարզի Վարդաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	825 838	1	ՀՀ Արարատի մարզ, Վարդաշեն	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
3.	98111140/16	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1 327 367	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
4.	98111140/17	«ՀՀ Շիրակի մարզի ք.Գյումրու թիվ 20 միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1 673 723	1	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը

5.	98111140/18	«ՀՀ Շիրակի մարզի ք.Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1 702 589	1	ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
6.	98111140/19	«ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	961 907	1	ՀՀ Տավուշի մարզ, Բերդ	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
7.	98111140/20	«ՀՀ Տավուշի մարզի Կայան բնակավայրի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	450 480	1	ՀՀ Տավուշի մարզ, Կայան	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացման

Մատուցվող ծառայությունների համառոտ բնութագիրը

Վերանորոգման աշխատանքների ընթացքում Խորհրդատուն պետք է պարբերաբար այցելի շինհրապարակ և վերահսկի կատարվող աշխատանքների համապատասխանությունը ծավալաթերթ/թերությունների ակտին և նախահաշվին:

Խորհրդատուն վերահսկման աշխատանքների ընթացքում պարտավոր է՝

1. Կազմակերպել շինհրապարակի այցելություններն ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի:
2. Անհրաժեշտության դեպքում, այցելել շինհրապարակ ըստ Պատվիրատուի մասնագետների պահանջի:
3. Կատարել անհրաժեշտ խորհրդատվություններ Պատվիրատուի մասնագետներին և Կապալառուին շինարարության ընթացքում:
4. Գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին, ներառյալ համապատասխանությունը անվտանգության ապահովմանը:
5. Համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը:
6. Պատվիրատուի և այլ շահագրգիռ կողմերի համաձայնեցմանը ներկայացնել փոփոխված ծավալաթերթերը, Կապալառուի պայմանագրային նախահաշվով չնախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքները:
7. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:

8. Ուսումնասիրել շինարարության ընթացքում առաջացած խնդիրները և Պատվիրատուին ներկայացնել դրանց լուծման տարբերակները և աշխատանքային ծավալները: Նոր, պայմանագրային նախահաշվում չներառված աշխատանքների ի հայտ գալու դեպքում ներկայացնել նաև այդ աշխատանքների միավոր գները՝ նախահաշվի տեսքով:

9. Վավերացնել Կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների՝ թերությունների ակտին և ծավալաթերթ/նախահաշվին համապատասխանության համար:

10. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը և հանձնման-ընդունման ակտերը:

11. Վճարման ներկայացվող կատարողական ակտերը, ծածկված աշխատանքների ակտերը և շինարարության ավարտական ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:

Խորհրդատուի աշխատանքների ընդունման կարգը

Հեղինակային հսկողության աշխատանքների ավարտ է համարվում շինարարական աշխատանքների հանձնման ընդունման ակտի և վերջնական հաշվետվության ներկայացումը Պատվիրատուին:

Խորհրդատուի հաշվետվությունները

Հեղինակային հսկողության պայմանագրով նախատեսված առաջադրանքի կատարման վերջնական հաշվետվություն է հանդիսանում հեղինակային հսկողություն իրականացրած անձի կողմից ներկայացված հաշվետվությունը, որը պետք է պարունակի տեղեկություններ շինարարական աշխատանքների ժամկետի, արժեքի մասին, ինչպես նաև հավաստում այն մասին, որ շինարարական աշխատանքները իրականացված են ծավալաթերթ/թերությունների ակտերին և նախահաշվին համապատասխան, որը Խորհրդատուն պետք է ներկայացնի Պատվիրատուին այդ առաջադրանքով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտական ակտի (հանձնման-ընդունման ակտի) ստորագրումից հետո, 5 օրվա ընթացքում:

Ծրագրի շինարարության ընթացքում, հեղինակային հսկողություն իրականացնող անձի կողմից ներկայացվող յուրաքանչյուր կատարողականի հետ Խորհրդատուն Պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություն՝ կատարված աշխատանքների ամփոփ ներկայացմամբ և հավաստում կատարված աշխատանքները ծավալաթերթ/թերությունների ակտերին և նախահաշվին համապատասխան լինելու մասին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Արամե» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնց 6/169
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 08270782
Հաշիվ 1 Հ/Հ՝ 900011054716	Հ/Հ՝ 163308045760
Հաշիվ 2 Հ/Հ՝ 900011054724	
Հաշիվ 3 Հ/Հ՝ 900011054732	
Հաշիվ 4 Հ/Հ՝ 900011056497	Բանկ՝ Հայէկոնոմբանկ
Հաշիվ 5 Հ/Հ՝ 900011056513	
Հաշիվ 6 Հ/Հ՝ 900011056521	
Հաշիվ 7 Հ/Հ՝ 900011056539	
Կենտրոնական գանձապետարան	Տնօրեն՝ Ա.Սարգսյան
Գործադիր տնօրեն	
Ս. Բաղինյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ